Doi: 10.56737/2953-7843-2023.08-163

ԿԱՐԻՆԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱԱ ԼԻ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» ԱՂՕԹՔԻ ԼԵԶՈՒԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ[1]

Պահլաւունի Ներսէսը իրապէս լի եղաւ շնորհիմնեռով՝ իբրեւ հոգեզարդ Հայրապետ Հայոց, իբրեւ ուղղափառահաւատ խորիմաց աստուածաբան Մայր եկեղեցւոյ, իբրեւ ներշնչեալ աղօթող բանաստեղծ, իբրեւ նուիրեալ կրթական մշակ եւ իբրեւ բաշակորով պաշտպան հայ պետութեան։

Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հայ ազգի մեծանուն զաւակ, Հայ Առաքելական Եկեղեցու սրբերի կարգը դասուած, հայոց հոգեւոր ու մշակութային անդաստանին իր մեծ, անուրանալի նպաստը բերած հայրապետի՝ Ներսէս Շնորհալու մասին շատ է խօսուել ու գրուել։ Ցաճախ է փորձ արուել ըստ արժանւոյն գնահատել նրա վաստակը, սակայն հիմնականում բառերն ու խօսքերը չեն բաւարարել։ Շնորհալու աւանդն անչափ մեծ է բազմաթիւ ասպարէզներում, որոնցից մէկը գրականն է։ Նա եղել է խիստ բազմաժանր ստեղծագործող, հարազատ ժողովրդին իբրեւ անգնահատելի ժառանգութիւն թողել բանաստեղծութիւններ, պօէմներ, տաղեր, գանձեր, շարականներ, հանելուկներ, թղթեր եւ այլն։

Շնորհալու գրական ժառանգութեան անքակտելի մասն են աղօթքները, որոնք ցայսօր հնչում են հայ հոգեւորականի եւ պարզ հաւատացեալի շուրթերից։ Դրանցից առաւել յայտնի ու առանձնայատուկ սիրուած է «Հաւատով խոստովանիմ» սկսուածքով աղօթքը, որը մասն է կազմում Հանգստեան ժամերգութեան։ Այն բաղկացած է քսանչորս տնից եւ համապատասխանում է օրուայ քսանչորս ժամերին։ Բացի այլեւայլ արժանիքներից՝ աղօթքն աչքի է ընկնում գեղեցիկ, հարուստ

[1]* *Ստացվել է՝ 15.08.2023 թ., գրախոսվել է՝ 10.09.2023։*
Էլ. հասցե՝ karine.arakelyan.2016@mail.ru։

լեզուով եւ արտայայտչական ու պատկերաւորման տարբեր միջոցների հմուտ ու տեղին կիրառութեամբ, թէպէտ հեղինակը մեծին վայել համեստութեամբ աղօթքի նախադրութեան մէջ նշում է, թէ «արարաք զաղաւթս զայս պարզ եւ յստակ բանիւ՝ վասն տխմարաց դիւրահաս լինելոյ...»[2]։

Ժողովրդի հետ պարզ ու մատչելի լեզուով խօսելու եւ տգիտութեան դէմն առնելու անհրաժեշտութեան մասին շեշտում էր դեռեւս Խոսրով Անձեւացին՝ գրելով. «քանի որ եպիսկոպոսութեան վիճակուեցի եւ, ստանձնելիս, շատերի մօտ տգիտութիւն տեսայ, եւ այս ամէնը բոլորին խօսքով ճանաչեցնելը անհնար նկատեցի, պատշաճ համարեցի գրի յանձնել, որպէսզի, թերեւս, այսպէս դիւրին լինի ուսանել կամեցողների համար»[3]։

«Նախադրութիւնք խրատականք յաղագս աղաւթից, զոր արարեալ է Տեառն Ներսիսի, եղբաւր Գրիգորիսի, Հայոց վերադիտողի» հատուածից պարզ է դառնում հեղինակի նպատակը. բոլոր քրիստոնեաների համար՝ մեծ թէ փոքր, հոգեւորական թէ աշխարհական, գրել մի աղօթք, որն անգիր սովորեն ամէնքը եւ աղօթեն եկեղեցում, տանը, անդաստանում թէ աշխատելիս։ Պարզ է դառնում նաեւ, որ Շնորհալին այս աղօթքը գրել է նախքան կաթողիկոս դառնալը։ Շնորհք պատրիարք Գալուստեանը նշում էր, որ Շնորհալուն պարտական են բոլոր աղօթասէրները. «Իր աղօթասացութեանց գլուխ – գործոցն է «Հաւատով խոստովանիմ» -ը՝ բաղկացած 24 տուներէ..., որոնք իրենց մէջ կը խտացնեն հողեղէններուս գրեթէ բոլոր աղօթքի տեսակները (դաւանողական, զղջական, աղաչական), որոնցմով կը ներկայանանք մեր Արարչին առջեւ»[4]։

«Հաւատով խոստովանիմ»-ին կից կայ նաեւ մէկուրիշ կարճ աղօթք՝ վերնագրուած «Խոստովանութիւն հաւատոյ ճշմարիտ քրիստոնէից, զոր պարտ է ի ժամ վախճանին նախքան զհաղորդելն խոստովանեսցի եւ ապա հաղորդեսցի», որը, ինչպէս նշում է Ղեւոնդ Ալիշանը, «միոյ միոյ յերից Անձանց աստուածութեան պատշաճ դաւանութիւն է ըստ առանձ-

---

[2] *«Մատենագիրք հայոց», հտ. ԻԱ., ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գք. Ա., Ե., 2018, էջ 1205։*

[3] ԽՈՍՐՈՎ ԵՊՍ. ԱՆՁԵՒԱՑԻ, *Սուրբ եւ հոգեկիր. Աստծու կամքը եւ երկիւղը ճշմարտութեամբ ծանուցողի յոյժ հոգեշահ, պիտանի եւ խրատական գործերը եւ կենսագրութիւնը, աշխատասիրութեամբ Բագրատ եպիսկոպոս Գալստանեանի, Երեւան, 2022, էջ 37։*

[4] ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, *Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետը. խօսք երախտիքի եւ մեծարանքի անձին եւ գործին հանդէպ, «Էջմիածին», 1973, թ. ԺԲ. (12), էջ 26։*

նական յատկութեանցն եւ չորրորդ տամբ՝ դարձեալ բովանդակութիւն նոյն իմաստից, համառօտ, յստակ եւ բացայայտ»[5]։

«Հաւատով խոստովանիմ» աղօթքի առաջին հինգ տները դաւանողական բնոյթ ունեն, ուղղուած են Ամենասուրբ Երրորդութեանը եւ երեք անձանց՝ զատ-զատ։ Այստեղ, ի թիւս բազմաթիւ այլ շերտերի, Շնորհալին շատ սեղմ, սակայն խտացուած կերպով անդրադառնում է աւետարանական մի շարք դրուագների։ Հայր Աստծուն դիմելիս, օրինակ, յիշում է մոլորուած ոչխարին, որի փրկութեան համար Հայրը Որդուն աշխարհ ուղարկեց։ Մոլորեալ ոչխարի առակն արձանագրել է Ղուկաս աւետարանիչը։ Այն պատմում է բարի հովուի մասին, որն իննսունինը ոչխարը թողնում է արօտավայրում եւ գնում փնտրելու կորածին։ «Մոլորուած ոչխար» արտայայտութիւնն առկայ է նաեւ Հին Կտակարանում։ Սաղմոսաց գրքում կարդում ենք. «Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա՛ զծառայս Քո, զի զպատուիրանս Քո ես ոչ մոռացայ»[6]։

«Մոլորեալ ոչխար» արտայայտութիւնը յետագայում ձեռք է բերել դարձուածքի արժէք եւ նշանակում է «Ճիշտ ճանապարհից շեղուած, փուչ, անառակ մարդ»[7]։ Սրան հոմանիշ են «մոլորեալ գառ» եւ «մոլորեալ որդի» դարձուածքները[8]։

Նոյն գլխում Ղուկաս աւետարանիչը պատմում է նաեւ կորսուած դրամի եւ անառակ որդու առակները։ Այս երկրորդին Շնորհալին անդրադառնում է աղօթքի անմիջապէս յաջորդ տողում. «Ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին եւ զգեցո՛ ինձ զպատմուճանն առաջին, զոր մերկացայ մեղաւք»[9]։

Անառակ որդու առակն առնչուել է նաեւ Պայծառակերպութեան տօնին, ինչպէս նշուել է. «Այլակերպութեան օրը երկրորդ Ադամը հագաւ դրախտում մեր նախահօր կողոպտուած պատմուճանն ու դրանով զգեստաւորեց մեր բնութիւնը։ Եւ մենք կատարում ենք այն յիշատակը, որ մեր

---

[5] ՂԵՒՈՆԴ ՎՐԴ.ԱԼԻՇԱՆ, *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ, Ս. Ղազար, 1873, էջ 253։

[6] *«Աստուածաշունչ մատեան», Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1977 թ. էջ 659։ Այսուհետեւ Աստուածաշնչից կատարուող մէջբերումները կը նշուեն սոյն հրատարակութիւնից։*

[7] Ա. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Ս. ԳԱԼՍՏԵԱՆ, *Հայոց լեզուի դարձուածաբանական բառարան, Երեւան, 1975, էջ 430։*

[8] *Անդ։*

[9] ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, *Հաւատով խոստովանիմ*, Երեւան, 2013, էջ 2։ *Այսուհետ այս գրքից կատարուող մէջբերումների էջերը կը նշուեն շարադրանքին կից փակագծերի մէջ։*

հնացած ձորձերն այսօր դէն գցեցինք եւ հայրենի լուսեղէն պատմուճանով զգեստաւորուեցինք։ Եւ սա երեւում է Անառակ որդու հօր հրամանից իր ծառաներին. «Անմիջապէս հանեցէ՛ք նրա նախկին պատմուճանը եւ հագցրէ՛ք նրան» (Ղուկ. ԺԵ. 22)»[10]։

Աղօթքի յաջորդ՝ չորրորդ տան մէջ, որն ուղղուած է Որդի Աստծուն, հեղինակը մի քանի բառով ներկայացնում է Փրկչի երկրային կեանքի կարեւորագոյն հանգրուանները. «Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առէր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար առ Հայր» (3)։

Փրկչին ուղղած պաղատանքում Շնորհալին խնդրում է յիշել իրեն, ինչպէս աւազակին։ Դարձեալ յիշատակում է աւետարանական դրուագի, մասնաւորապէս խաչելութեան ժամի, երբ ձախակողմեան աւազակը նախատում է Յիսուսին, իսկ աջակողմեանն աղերսում՝ ասելով. «Յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով» (Ղուկ. ԻԳ. 42), եւ ստանում է բաղձալի հաւաստիքը. «Ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին» (Ղուկ. ԻԳ. 43)։

Սուրբ Հոգուն ուղղած աղօթքում Ներսէս Շնորհալին յիշում է Նոր Կտակարանի դրուագները, որտեղ Սուրբ Հոգին յայտնապէս երեւում է, ինչպէս աղաւնակերպ երեւաց Յորդանան գետում Քրիստոսի մկրտութեան ժամանակ կամ Նրա համբարձումից յետոյ վերնատանը՝ հրեղէն լեզուների տեսքով հանգչելով առաքեալների վրայ։ Այս իրադարձութիւնը կոչուեց Հոգեգալուստ եւ տօնւում է առաքելահաստատ բոլոր եկեղեցիներում։ Հոգեգալուստի համար Սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետը տօնական եօթ օր է սահմանել[11]։

Իւրօրինակ հետաքրքրութիւն են ներկայացնում Արարչին տրուած բնորոշիչները, որոնցով սկսւում են աղօթքի մնացեալ տասնինը տները։ Դրանց մեծ մասը սերտ առնչութիւն ունի Սուրբ Գրքի հետ։ Արարչին տրուած անունների մասին գրել են բազմաթիւ աստուածաբաններ եւ միջնադարեան մեկնիչներ։ Դիոնիսիոս Արէոպագացին նշում էր, որ «ոչ միայն այս աստուածային անուններն են աստուածաբանները ներկայացնում ամենակատարեալ կամ մասնակի նախախնամութիւններից կամ նախախնամուածներից, այլ նաեւ խորհրդագէտներին եւ մարգարէ-

---

[10] *«Տէրունական տօներ», «Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու տօները (տօնախօսական բացատրութեամբ)», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006, էջ 27։*

[11] *Հմմտ. «Տէրունական տօներ», էջ 14։*

ներին սրբազան շէնքերում կամ այլուր երբեմն երեւացած աստուածայինների լուսաւորող տեսիլքներից»[12]։

Այս անուններից յիշենք մի քանիսը։ Օր.՝ «Անեղ բնութիւն», այսինքն՝ անստեղծ, ինքնագոյ բնութիւն։ Անեղութիւնը Աստծու բնութեան ամենաէական ստորոգելիներից մէկն է, եթէ ոչ ամենաէականը։ Բաւական է նշել, որ հաւատի դաւանութիւնն սկսում է Հայր Աստծու դաւանութեամբ, որի առաջին բնորոշիչը հէնց անեղ լինելն է. «Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած՝ անեղ, անծին եւ անսկիզբն...»[13]։

«Անեղ բնութիւն»-ը Շնորհալին կիրառել է նաեւ աղօթքի սկզբնամասում «անեղ եւ անմահ բնութիւն» արտայայտութեան մէջ՝ Սուրբ Երրորդութեանը դաւանելիս. «Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն» (1)։ Այստեղ հաստատւում են Աստուածային բնութեան երկու էական յատկանիշներ՝ անստեղծ կամ անսկիզբ եւ անվախճան լինելը։ Նոյն գաղափարն արտայայտուած է Յայտնութեան գրքի վերջին գլխում, որտեղ Յիսուս խօսում է իր երկրորդ գալստեան մասին. «Ես եմ Արիա եւ Ով, Սկիզբն եւ Կատարած, Առաջին եւ Վերջին» (Յայտ. ԻԲ. 13)։

«Տեսող ամենայնի, Քննող գաղտնեաց». Աստծու ամենատես լինելու եւ մարդկային հոգու ամենախոր անկիւնները եւ ամենանուրբ ծալքերը թափանցելու կարողութեան մասին եւս բազմաթիւ են վկայութիւնները Սուրբ Գրքում։ Ինչպէս. «որ քննէ զսիրտս եւ զերիկամունս, Աստուած արդար» (Սաղմ. է. 10)։

«Ամենախնամ Տէր եւ Խնամող արարածոց» հոմանիշ բնութագրիչները, որոնցով սկսւում են աղօթքի տարբեր տներ, Արարչի՝ իր բոլոր արարածների խնամատարը լինելու մասին են, ինչը եւս բազմիցս շեշտուել է Նոր Կտակարանում, մասնաւորապէս Լեռան քարոզում. «Զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց, եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց» (Մատթ. Ե. 45)։

Աղօթքի հեղինակը նոյնպէս խնամք է խնդրում Բարձրեալից, յատկապէս հոգեւոր խնամք՝ կեանքի ճանապարհն առանց մեղքերի ու գայթակղութիւնների անցնելու, հոգուն եւ մարմնին սպառնացող վտանգներից պահպանուելու համար։

---

[12] ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԷՈՊԱԳԱՑԻ *(Դիոնիսիոս Արիսպագացի), Աստուածաբանական երկեր, Արէոպագիտիկաներ, Երեւան, 2013, էջ 129։*

[13] *«Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 2։*

Թէեւ աղօթքը բաղկացած է քսանչորս տնից եւ ծաւալային առումով մեծ չէ, սակայն այստեղ կան բառեր, որոնք ունեն միւսներից աւելի յաճախակի կիրառութիւն, ու նաեւ այդպէս է շեշտւում դրանց արտայայտած հասկացութիւնների կարեւորութիւնը։ Յիշենք լոյս գոյականը։ Այն միշտ զուգորդուել է աստուածային էութեան, վսեմի, գեղեցիկի, ամենայն լաւի հետ։ Աղօթքի մէջ լոյս-ը մաս է կազմում աստուածային անուններին Բ. եւ ԻԱ. տներում. «անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն» (1–2), «Լոյս ճշմարիտ Քրիստոս» (12)։ Երկրորդ դէպքում ուղղակի կապ կայ Յովհաննէսի Աւետարանի հետ, որտեղ Քրիստոսն իր մասին ասում է. «Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց» (Յովհ. Ը. 12)։

Հայ գրականութեան եւ իրականութեան մէջ լոյսը միշտ գովերգուել է առանձնայատուկ սիրով ու ջերմութեամբ։ Աստուածամայրը եւս համեմատուել է լոյսի հետ եւ կոչուել այն ծնող, ինչպէս ասուած է Մովսէս Խորենացու շարականում.

Լոյս, լուսոյ մայր
եւ կենարար Բանին բնակարան
Քեզ երանեն ազգ եւ ազինք ամենայն[14]։

Արեւագալի ժամերգութեան մէջ Քրիստոսի յարութիւնը նոյնացւում է արեւի ծագմանը։

Լոյսի գովերգումը յատուկ է Շնորհալու ողջ ստեղծագործութեանը։ Դրա վառ օրինակը «Առաւօտ լուսոյ» հանրածանօթ շարականն է կամ Յարութեան տաղը.

Այսաւր լոյս ծագեաց յաւուրս առաջին,
Արեգակն արդար փայլեաց յարարածս
եւ լուսաւորեաց՝ որք ի խաւարի[15]։

Իրաւացիօրէն նշուել է, որ «Սուրբ Ներսէս Շնորհալին հիմնովին բարեփոխեց եւ ըստ ամենայնի հարստացրեց հայոց եկեղեցական ողջ ժամասացութիւնը, «Արեւագալի» ժամի համար յօրինեց 4 երգ. «Յարեւելից մինչ ի մուտս», «Ճգնաւորք Աստուծոյ», «Լոյս, Արարիչ լուսոյ» եւ «Ճանապարհ եւ Ճշմարտութիւն»՝ իւրաքանչիւրին կցելով մէկական «Յորդո-

[14] *«Հայ հին եւ միջնադարեան քնարերգութիւն», Երեւան, 1986, էջ 70։*
[15] Ներսէս Շնորհալի, *Տաղեր եւ գանձեր, Երեւան, 1987, էջ 108։*

րակ», որով երգերի ընդհանուր թիւը հասնում է 8-ի։ Սրանք լուսաւոր հաւատով ներծծուած, փառաբանական խօսքի ու ներշնչանքի, երաժշտական կատարեալ ներդաշնակութեամբ հոգեւոր երգի փայլուն նմուշներ են»[16], ինչպէս. «Լո՛յս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր, ի դասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս Քո իմանալի»[17]։

«Հաւատով խոստովանիմ» աղօթքում լոյսը կիրառուած է նաեւ հետեւեալ իմաստով. ԻԱ. տան մէջ հեղինակը խնդրում է իր երկրային կեանքի վերջին օրն ուրախութեամբ տեսնել աստուածային փառքի լոյսը. «Արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց Քոց ի կոչման աւուրն» (12)։ Փառաց լոյսի մասին է յիշատակւում նաեւ Սուրբ էջմիածնի շարականում. «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա[18]։

Հեղինակը չի մոռանում աստուածային գիտութեան լոյսի մասին եւ այն թախանձագին խնդրում է Ի. տան մէջ. «Վառեսցէ զլոյս գիտութեան Քո ի սրտի իմում» (7)։

Աղօթքում ոչ մէկ անգամ հանդիպում է լուսաւորել *բայը, որն ուղղակիօրէն կապուած է աստուածային ներգործութեան հետ. «Լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղաւթել Քեզ ի հաճոյս եւ ընդունել ի Քէն զխնդրուածս իմ» (2) կամ «Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի Վերնատունն եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին» (3)։*

Լոյսն անմիջաբար կապուած է կրակի հետ, եւ պատահական չէ, որ Սուրբ Գրքում այս մասին բազմիցս վկայւում է, ինչպէս Ելից գրքում. «Եւ լեառն Սինա ծխէր առ հասարակ, քանզի իջեալ կայր Աստուած ի վերայ նորա հրով» (Ելք. ԺԹ. 18)։ Շնորհալին նոյնպէս Քրիստոսին անուանում է կենդանի հուր եւ խնդրում այս հրով բորբոքել իր անձը՝ մաքրուելու բոլոր աղտերից ու մեղքերից՝ լուսաւորուելու աստուածային լոյսով։ Պէտք է նշել, որ հուրը միայն աստուածային ոլորտի հետ չի կապւում, այլեւ դժոխքի եւ իր այս հակոտնեայ իմաստով եւս կիրառուած է «Հաւատով խոստովանիմ» աղօթքի մէջ. «Փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն» (13)։

Հակադիր նշանակութիւն ունեցող բառերով՝ լեզուական եւ խօսքային հականիշներով հարուստ է «Հաւատով խոստովանիմ» աղօթքը։ Հա-

---

[16] *«Խորան լուսոյ», «Երգ Արեւագալի», Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 2006, էջ 3։*

[17] *Անդ, էջ 16։*

[18] *Տե՛ս «Ձայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 350։*

կանիշների կիրառութեամբ իմաստն աւելի է ընդգծում, եւ այս միաւորներն արժանանում են առանձնայատուկ ուշադրութեան։ Ոճական այս հնարանքը, որ կոչւում է հակադրոյթ (հակադրութիւն), լայն տարածում է ունեցել հայ գրականութեան, մասնաւորապէս քնարերգութեան մէջ։ Յիշենք Ներսէս Շնորհալու մեծ նախորդի՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու մատեանից մի հատուած.

Ոչափ դու ինձ, ահա յայց ելեալ,
Առաւել ողորմեացիս ըստ Քոյդ մեծութեան,
Գովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուիս,
Հզաւրդ՝ տկարիս, ամենակարդ՝ վարանելոյս,
Իմաստութեանդ աղբիւր՝ յիմարիս եւ թմբրելոյս…[19]

Շնորհալին հականիշներ օգտագործում է տարբեր պարագաներում՝ հիմնականում ասելիքն առաւել ամբողջական դարձնելու նպատակով։ Մի քանի օրինակ. լոյս եւ խաւար, սրանք բացարձակ հակականիշներ են, եւ Շնորհալին սրանք կիրառել է Աստծու մասին աւելի ճշգրիտ պատկերացում տալու համար. «միասնական Սուրբ Երրորդութիւն եւ Մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի» (1–2)։ Անմիջապէս յետոյ հեղինակը գործողութեան մէջ է դնում այս գոյականները եւ կիրառում արդէն բայ հականիշներ՝ խօսելով աղօթողի հոգեվիճակի մասին. «Հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեանց եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ» (2)։

Կենդանի եւ մեռեալ. «Դատաւոր արդար, յորժամ գաս փառաւք Հաւր դատել զկենդանիս եւ զմեռեալս» (13)։ Այստեղ եւս ուղիղ կապ կայ Պօղոս առաքեալի՝ Թեսաղոնիկէի եկեղեցուն ուղղուած նամակի հետ, որում առաքեալը խօսում է Քրիստոսի երկրորդ գալստեան եւ համընդհանուր յարութեան մասին. «Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, եթէ մեք որ կենդանիքս եմք մնացեալ ի գալստեանն Տեառն՝ ոչ ժամանեմք ննջեցելոցն» (Ա. Թեսաղ. Դ. 14)։

Սիրել եւ ատել. «Զաւրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս եւ սիրել զՔեզ միայն» (8)։

Ջնջել եւ գրել. «Ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց եւ գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց» (4–5)։

---

[19] Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, Երեւան, 1985, էջ 464։

Շնորհալին կիրառում է տարբեր խօսքի մասերի պատկանող հականիշներ, աղօթքի մէկ տան մէջ երբեմն օգտագործում է երկու կամ երեք հականշային զոյգեր՝ բոլորը ծառայեցնելով յստակ նպատակի՝ խօսքն առաւել ազդեցիկ ու պատկերաւոր դարձնելուն։ Յիշենք դրանցից մի քանիսը. միջխօսքամասային հականիշներ՝ բարի *եւ* չարութիւն. *«Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն» (12), մէկ տան մէջ հականիշների երկու զոյգ. «Քննող գաղտնեաց, մեղայ Քեզ* կամայ *եւ* ակամայ, գիտութեամբ *եւ* անգիտութեամբ*» (5), երեք զոյգ. «Պահապան ամենայնի Քրիստոս, աջ Քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել» (9) եւ այլն։*

Աղօթքի կարեւոր բաղկացուցիչ մաս են խնդրանքներն ու աղաչանքները, եւ, կապուած այս առանձնայատկութեան հետ, աղօթքում առաւել գործածական է բայի հրամայական եղանակը։ Եւ այստեղ էլ բուն եւ արգելական հրամայականների միջոցով ստեղծւում են ինքնատիպ հակադրութիւններ։ Աւելացնենք նաեւ, որ Շնորհալին երբեմն գործածում է բառեր կամ արտայայտութիւններ, որոնք առանձին վերցրած հակադիր իմաստ չունեն, սակայն այդպիսի իմաստ ձեռք են բերում համապատասխան միջավայրում եւ դառնում խօսքային հականիշներ՝ խիստ նպաստելով խօսքի հարստացմանը։ Այլ կերպ ասած «բառերի իմաստային տարողունակութեան սահմանները ընդարձակւում են, եւ բառերը ձեռք են բերում հակադրական յարաբերութիւններ արտայայտելու լայն հնարաւորութիւններ»[20]։

Այսպիսի հականիշներ կարելի է համարել «դատաստանի մէջ մտնել» եւ «յաւիտենական հրից փրկել» կամ «իմ անձի կամքով գնալ» եւ «լինել ըստ քո բարեսէր կամքի» արտայայտութիւնները. «Մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի Քում, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն» (13)։ «Մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց Քոց բարեսիրաց» (8)։

Աղօթական խօսքին խորը իմաստ եւ յատուկ հնչեղութիւն է հաղորդում կրկնութիւնը։ Կրկնութիւնների արմատները գալիս են դարերի

---

[20] Ս. Էլոյեան, *Ժամանակակից հայերէնի բառային ոճաբանութիւն, Երեւան, 1989, էջ 156։*

խորքից, եւ սրանք իրաւամբ կապւում են ժողովրդական բանահիւսութեան հետ։ «Հաւատով խոստովանիմ» աղօթքի քսաներեք տները, բացառութեամբ վերջինի, աւարտւում են գրեթէ նոյն խնդրանք-նախադասութեամբ, որը կարելի է ասել, աղօթքի հիմնական գաղափարն է, ողնաշարը եւ իր մէջ է ներամփոփում մնացեալ բոլոր խնդրանքները՝ երկնային ողորմութեան, պէս-պէս շնորհների եւ այլն. «եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս» (2–14)։

Բառապաշարային տարբեր խմբեր եւ դրանց ոճական կիրառութիւններ քննելիս գեղարուեստական գրականութեան մէջ յաճախ կարելի է հանդիպել մի հետաքրքիր երեւոյթի։ Բառեր, որոնք արտայայտում են այս կամ այն ոլորտին, բնագաւառին պատկանող առարկաներ, իրեր, երեւոյթներ, հասկացութիւններ, հեղինակային խօսքում կարող են հանդէս գալ իբրեւ մի կուռ ամբողջութիւն եւ ունենալ ոճական ուրոյն դեր։ Այսպիսի երեւոյթի հանդիպում ենք աղօթքի Թ. տան մէջ, որտեղ Շնորհալին կիրառել է մարմնի տարբեր մասերի անուանումներ՝ որոշակի նպատակով։ Նա խնդրում է սրանց բոլորին ետ պահել մոլոր ընթացքից եւ առաջնորդել ուղիղ շաւիղներով՝ այսինքն՝ աստուածային կամքին համահունչ։ «Ամենախնա՛մ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ Քո սուրբ՝ ո՛չ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խաւսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անաւրէնութեան, այլ ուղղեա՛ զշարժումն սոցա՝ լինել միշտ ըստ պատուիրանաց Քոց յամենայնի» (6)։ Ինչպէս նկատում ենք, այստեղ իր ոճական դերն ունի նաեւ ոչ մասնիկի կրկնութիւնը, որի, ինչպէս նաեւ չ եւ մի մասնիկների միջոցով գրաբարում կազմւում էին ժխտական խոնարհման ձեւերը։

Նման երեւոյթ առկայ է աղօթքի վերջին տան մէջ, որտեղ Շնորհալի հայրապետը խնդրում է բոլոր սրբերի բարեխօսութիւնը՝ կարծես իր աղօթքը միաձուլելով նրանց աղօթքին։ Շնորհալին առանձին դիմում է Տիրամօրը, Յովհաննէս Մկրտչին, Ստեփանոս Նախավկային, Գրիգոր Լուսաւորչին, ապա թուարկում սրբերի դասերին՝ առաքեալներին, մարգարէներին, վարդապետներին, մարտիրոսներին, հայրապետներին, ճգնաւորներին, կոյսերին, միանձանց, վերջում աւելացնում է. «եւ ամենայն սրբոց Քոց երկնաւորաց եւ երկրաւորաց» (14)։ Այստեղ Ներսէս

Կլայեցին, անշուշտ, նկատի ունի ինը դաս հրեշտակներին, նաեւ տօնելի եւ ոչ տօնելի, յայտնի եւ անյայտ սրբերին, որոնց համար Եկեղեցին յատուկ տօն է սահմանել՝ «հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից», որը սովորաբար նշւում է նոյեմբերի մէկի մօտակայ շաբաթ օրը։

Թէեւ «Հաւատով խոստովանիմ» աղօթքը գրուել է բոլոր քրիստոնեաների համար, եւ Շնորհալին էլ այն անուանել է «Աղաւթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց ի Քրիստոս», սակայն որոշ հետազօտողների ուշադրութիւնից չի վրիպել նրա ազգային էութիւնը՝ յատկապէս պայմանաւորուած մէկ բառի առկայութեամբ։

Սփիւռքահայ անուանի գրող, քննադատ, խմբագիր Պօղոս Սնապեանը «Հաւատով խոստովանիմ» աղօթքի մէջ տեսնում էր հայ մարդուն իր մարդկային բոլոր յատկանիշներով, կենսափիլիսոփայութեամբ, աշխարհն աւելի արդար տեսնելու, կեանքից վեր իրականութիւնների հետ հաղորդակցուելու իղձերով։ Սնապեանը նշում էր, որ «ներքին այս արժանիքներով ձեռք բերած ցեղային նկարագրին առընթեր՝ արձակ բանաստեղծութեան այս գլուխ-գործոցը ունի նաեւ խիստ յատկանշական արտաքին նշան մը, որ չի կրնար ուշադրութենէ վրիպիլ.

Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս Քո՝
եւ կատարեա՛ ի բարի զխնդրուածս իմ
Բարեխօսութեամբ սրբոհւոյ Աստուածածնի,
եւ Յովհաննու Մկրտչին,
եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային,
եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին…

Բանաստեղծութեան մէջ ինքը բանաստեղծութիւն մըն է այս «Մերոյ» դերանունը, որ սոսկական իր ներկայութեամբ տարբեր համ կը հաղորդէ աղօթքին եւ կը լուսաւորե միւս բառերուն ակունքը, տարողութիւնը, իրաւութեան շաղախը։ Բայց իրապէս բացահայտիչ է ու գեղեցիկ այս մասնաւորումը»[21]*։*

«Յաճախ աղօթեցէ՛ք,– գրում էր Սուրբ Հայրապետը,– քանզի աղօթքներն են, որ բարձրացնում են մարդկանց առ Աստուած եւ Աստծուն խոնարհեցնում դէպի մարդիկ»[22]*։ Իր յորդորն իրականացած*

[21] Պ. Սնապեան, *Տարեդարձներ, Պէյրութ-Լիբանան, 2001, էջ 40–41։*
[22] *Աղօթագիրք, «Գանձասար» մատենաշար, Երեւան, 1992, էջ 56։*

տեսնելու համար շնորհաշատ հովուապետն իբրեւ անգին ժառանգութիւն թողել է բազմաթիւ աղօթքներ, շարականներ եւ այլն, որոնց մէջ իր ուրոյն տեղն ունի «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որն արդէն շուրջ ինը դար հայ քրիստոնեայի շուրթերին է։ Կազմուած լինելով դաւանողական, ապաշխարութեան, աղաչական մասերից՝ այն ներառում է աղօթքի բոլոր տեսակները եւ հաւատաւոր իւրաքանչիւր անհատի յուզող խնդիրները։ Խորը, բազմաշերտ, հարուստ բովանդակութիւնը զուգակցւում է աղօթքի մատչելի, միաժամանակ ճոխ ու գեղեցիկ լեզուով, պատկերաւորման տարբեր միջոցների հմուտ ու տեղին կիրառութիւններով, ձեւի ու բովանդակութեան կատարեալ ներդաշնակութեամբ։ Պատահական չէ, որ այն թարգմանուել է երեսունվեց լեզուներով եւ իր մնայուն, անխախտ տեղն ունի համաշխարհային հոգեւոր մշակոյթի գանձարանում։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ներսէս Շնորհալի, «Հաւատով խոստովանիմ», աղօթք, լեզու, խօսք, ոճ, պատկերաւորման միջոց:

РЕЗЮМЕ

Одним из самых ярких представителей армянской духовной, научной, литературной и музыкальной мысли является Святой Нерсес Шнорали. Велики его заслуги на литературном поприще: он был в высшей степени многожанровым творцом, оставил своему народу наследие в виде поэм, стихов, кладами, песен, загадок, посланий, молитв и т. д.. Наиболее известным и особенно популярным среди молитв является «Съ вѣрою исповѣдую», являющаяся частью церковного богослужения. Она состоит из двадцати четырех строф и соответствует двадцати четырем часам суток. Глубокое, многослойное, богатое содержание сочетается с доступным, но богатым и красивым языком молитвы, с умелым и уместным использованием различных средств изображения, создавая совершенную гармонию формы и содержания.

SUMMARY

Saint Nerses Shnorhali is one of the brightest representatives of Armenian spiritual, scientific, literary and musical intellect. His merit in the literary field is too great: he was a highly multi-genre creator, left a legacy to his people poems, verses, riddles, songs, epistles, prayers, etc.. The most famous and especially popular among prayers is “I confess whith faith”, which is part of the church service. It consists of twenty-four strophes and corresponds to the twenty-four hours of the day. The deep, multi-layered, rich content is combined with the accessible yet opulent and beautiful language of prayer, with the skillful and appropriate use of various ns of imagery, creating a perfect harmony of form and content.